



Բաժնեգիրն տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանիան երկիրներէն 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

ԹԻԻ 8

2. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1930

ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԵԱՆՔԻ ԾՐԱԳԻՐԸ

Dr. F. B. Meyer

Բու ի՞նչ հոգի է, դուն իմ ետեւէս եկուր: Յովհ. ԻԱ. 22

Տիրերիայի ծովուն արեւելեան եզերքը կը զբոսնէր: Առաւօտեան զով գեփիւոր կը փչէ մեր երեսին: Արձաթեայ փոքրիկ ալիքները վէտ վէտ գալարելով կը հասնին եզերքին եւ հոն կը թաղուին սպիտակ աւազին մէջ: Ծովակին միւս կողմը կը շողշողան Տիրերիայի եւ Կափառնալուսի ճերմակ սնակները արեգակին առաւօտեան ոսկեղէն ճառագայթներուն տակ: Մէկ կողմերնիս կը տեսնենք եզերք քաշուած ձկնորսի նաւակ մը եւ անոր քով տարածուած ուռկաններ ու քիչ մը անդին ձկնորսներու նախաճաշէն աւելցած կտորուանքներ եւ միւրիւրի վերածուած կայծերու կոյտ մը:

Յիսուս տակաւին նոր վերահաստատած ըլլալով իր մոլորեալ առաքեալն ու բարեկամը, անոր կը նկարագրէր թէ ինչ մահով պիտի փառաւորէր գԱռաւօտեան՝ «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, որ երբ դուն պատանի էիր, ինքիւրմէջ զօտի կը կապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր, քայց երբ ծերանաս, ձեռքերդ վեր պիտի բռնես, եւ ուրիշը քեզի զօտի պիտի կապէ ու պիտի տանի ուր չես ուզեր»:

Ո՛րքան տարբեր ծրագիր մը պիտի ընտրէր Պետրոս իրեն համար: Զիջանիւ ուրիշի մը կամքի: Պետրոս՝ իր բուն ու փութիւն խառնուածքով, որ մտքէն անցածն ու փափաքածը միեւնոյն վարկեան գործադրելու պատրաստ էր:

Տէրը քաջ զիտէր թէ իր այս ետանդուն աշակերտին նկարագիրը միմիայն երկարատեւ նեղութեան հնոցէն անցնելով միայն կարող պիտի ըլլար այնպէս մը դարբնուիլ որ անիկա կարենար իր եկեղեցիին մէկ սիւնը ըլլալ ու հեղինակը այն Առաջին թուղթին որ կը շողայ ամէն տեսակ տառապեալներու հանդէպ զգացուած փափկանկատ համբերութեամբ ու բուն կարեկցութեամբ մը:

Կ'երեւի թէ Յիսուս Պետրոսի նշան ըրած էր իրեն հետ քիչ մը առանձնաւորու եւ Յովհաննէս քիչ մը հեռուէն իրենց կը հետեւէր: Ուստի Պետրոս անոր ոտքերուն ձայնը լսելով դարձաւ ու ըսաւ, «Տէր, հապա ասիկա ի՞նչ պիտի ըլլայ»:

Պետրոսի հարցումը առարկելի հարցում մըն էր եւ անոր հին բնութիւնը ի յայտ կը բերէր: Ուստի Յիսուս յանդիմանական շեշտով մը անոր պատասխանեց՝ «Եթէ ես ուզեմ որ ատիկա կենայ մինչեւ ես դամ, քու ի՞նչ հոգի է, դուն իմ ետեւէս եկուր»: Երբ այս պատասխանը միւս աշակերտներուն ահանջը հասաւ, անոնք այնպէս հասկեցան թէ Յովհաննէս պիտի չմեռնէր, սակայն Յովհաննէս ինք այդպէս չմեռնեց իր վարդապետին խօսքը, այլ հասկեցաւ թէ իր վիճակը իր Տէրոջը ձեռքին մէջն էր ու Պետրոսինէն բոլորովին տարբեր պիտի ըլլար:

Ի՞նչ կեանքին ծրագիրը պատրաստուած է քրիստոսին:

տոսի մասնաւոր կամքով: «Եթէ ես ուզեմ», ի՞նչ արքայական խօսք, վառն զի մարդկային կեանքին ու մահուան դեկը Իր ձեռքին մէջ կը պահուի:

Նիւթապաշտը իր կեանքը կը նկատէ իբրեւ պարագաներու մէջ ծնունդը կամ կեանքի հոսանքին մատնուած նաւակ մը առանց թիակի եւ կամ թէ ծովուն ալիքներուն լանձնուած առարկայ մը: Սակայն քրիստոնեան դիտէ թէ իր կեանքին շաւիղը նախապէս պատրաստուած է իրեն: Մենք գիտենք թէ մեր Արարիչը ծրագրած է մեր կեանքին բնովը, ասպարէզը եւ պարագաները ու զանոնք մեր խառնուածքին ու կարողութեան յարմարցնելով կը ջանայ շինել մեր ներքին մարդը եւ ի յայտ բերել Աստուծոյ կերպարանքը մեր մէջ:

Մենք չենք գիտեր թէ ո՛ւր եւ ի՞նչպէս պիտի մեռնինք: Մենք թերեւս փոթորիկին մահերը մեր ականջին՝ ծովուն անդունդը գտնենք մեր զերեզմանը եւ կամ թէ անձայրածիր անապատի մը տաք աւազը ըլլալ մեր պատանքը: Կրնայ ըլլալ թէ Մովսէսի նման թաղուինք օտար երկրի անձանթ մէջ խորշին մէջ եւ կամ սրտակից բարեկամներու մօտ, որոնք մշտադալար տունկերով խնամեն մեր գերեզմանը: Սակայն ուր որ ալ հանգչին մեր ոսկորները, անոնց հանգստավայրը ծրագրուած է մեր Փրկչին կամքին համաձայն:

Մշտապէս խաղաղութիւն եւ երջանկութիւն այս կեանքին մէջ արդիւնքն են միմիայն այն հաւատքին որ կեանքի ամենահնչուն պարագաներուն մէջ իսկ կը տեսնէ Աստուծոյ գործադիր կամ թուլատու կամքը: Նոյն իսկ երբ մեզի հանդիպող դէպքեր ուրիշներու անհոգութեան կամ չարամտութեան արդիւնքը ըլլալ թուին, անոնք կը համոզին մեզի մեր Երկնաւոր Հօր նախախնամական կամքով միայն: «Եթէ ես ուզեմ»:

Սրտիդ վրայ դրօշմէ այս խօսքը: Կրնայ ըլլալ թէ քեզի վիճակուի ծաղիկ հասակիդ երեւութապէս առանց կեանքիդ նպատակը իրականացած տեսնելու, բաժնուիլ այս աշխարհին, կամ թէ իբրեւ տարագրեալ ու աքսորեալ երկար տարիներ ապրիլ, տանջուիլ ու մեռնիլ. սակայն ի՞նչ ալ որ ըլլալ վիճակդ՝ անիկա ծրագրուած ու կարգադրուած է քու Փրկչիդ կամքին համաձայն ու Անիկա քեզի պիտի զրկէ Իր ներկայութեան հրեշտակը գեղգ առաջնորդելու այնտեղ, զոր պատրաստած է քեզի համար:

Իւրաքանչիւր անհատի կեանքի ընթացքը կ'որոշուի իր նկարագրին ու կատարելիք ծառայութեան կերպին համաձայն: Քանի որ մեր կեանքը գերեզմանէն անդին պիտի շարունակուի, պէտք է մեր ներկան յարմարցուի մեր խառնուածքին եւ ապագային՝ Աստուծոյ մեծ տիեզերքին մէջ մեր բռնելիք զիրքին, որպէս զի հասնինք Քրիստոսի մեզի համար մտադրած նշանակէտին:

Պետրոս կանչուած էր նեղեալներու առաքեալ

ըլլալու: Անիկա կանչուած էր զրելու թուղթ մը որ տառապեալներուն սփոփանքը պիտի ըլլար: Սակայն ի՞նչպէս պիտի կարենար անիկա զրել այդպէս թուղթ մը եթէ նախ ինք նկատութիւններու քովքէն չանցնէր եւ իր նկարագիրը չկակղանար ու չսրբանար: Ինչպէ՞ս պիտի կարենար անիկա նկարագրել տառապեալ հաւատացեալի մը խոնարհութիւնը, հեղութիւնը եւ համբերութիւնը, եթէ ինք նախ տառապանքի պատժին մինչեւ յատակը ըմպած չըլլար եւ շարունակ իր աչքերուն առջեւ չունենար իր մարտիրոսական մահը, զոր Տէրը մասնաշաճ էր:

Իսկ Յովհաննէսի գործը պիտի ըլլար հաստատել թէ Յիսուս կենդանի է եւ երկինքի ու երկրի թագաւորը, նոյնն է ու չփոխուիր: Ուստի Յովհաննէս ի՞նչպէս կարող պիտի ըլլար զրել Յայտնութեան զիբը, տեսնել ու նկարագրել այն վսեմ տեսիլքները, ի թէ աքսորեալ ու միայնակ չապրէր մինչեւ Երուսաղէմի անկողնը, չտեսնէր տաճարին քանդումը եւ Հրէաներուն ցիր ու ցան ըլլալը:

Յիշեալ երկու առաքեալներէն եւ ոչ մէկը իր տառապած միջոցին կը հասկնար թէ ի՞նչի կը պատրաստուէր, սակայն երբ անոնք այսօր կը վերջիշին իրենց կատարած գործը եւ այդ գործին յատուկ նախապատրաստական միջոցները, ուրախութեամբ կը գնահատեն իրենց իմաստուն Վարդապետին դաստիարակութիւնն ու ծրագրը:

Ինչ որ անոնց համար յայտնի ճշմարտութիւն մըն է այսօր, ճշմարիտ է նաեւ մեզմէ իւրաքանչիւրին համար: Եթէ ոչ այս աշխարհի վրայ, անպատճառ հանդերձեալ աշխարհին մէջ պիտի ըմբռնենք թէ Տէրը ինչ իմաստութեամբ ծրագրած է մեր կեանքի ճամբան եւ մեզ քայլ առ քայլ առաջնորդած յարմարցնելու զմեզ այն գործին, զոր պիտի կատարէինք հոս եւ հանդերձեալ կեանքին մէջ:

Մինչ Աստուծոյ կը պատրաստէ մեր կեանքի ծրագիրը, մեր պարտականութիւնն է հնազանդութեամբ հետեւիլ Անոր առաջնորդութեան: «Դուն իմ հետեւն եկուր»: Երբ Յիսուս Պետրոսի իմացուց թէ ինչ մահով պիտի փառաւորէր անիկա զԱստուծոյ, անոր հրամայեց Իր ետեւէն երթալ եւ կրկնեց նոյն պատուէրը երբ Պետրոս ուղղակի իրեն չվերաբերած զաղտնիքի մը թափանցել ուզեց: Ապագայի ի՞նչ սպանալիքներու առջեւ ալ որ գտնուինք, մեր վարդապետին հետեւելէն շեղելու չենք, ոչ ալ փորձուելու ենք մեր տեսութեանէն հեռու գտնուած կէտեր ու խնդիրներ հետազօտելով ժամանակ կորսնցնել՝ այլ հաւատարմապէս կատարել մեր առջեւ գտնուած պարտականութիւնները:

Ի՞նչ կը նշանակէ Քրիստոսի հետեւիլ: Հետեւիլ Անոր կեանքի սկզբունքներուն, Անոր ազօթքի կեանքին, Անոր ծառայութեան, հեղութեան եւ քաղցրութեան կեանքին: Անոր հետեւիլ կը նշանակէ Անոր

նման անվերապահորէն յանձնուիլ ու համաձայնիլ մեր երկնաւոր Հօր կամքին: Մեր առջեւ երբեք չը դրուիր պարտականութեան շաւիղ մը, որուն վրայէն նախ Ինք չքայլէ մեր առջեւէն, քանզի ետը Անիկա Իր ոչխարները դուրս կը հանէ, Ինք անոնց առջեւէն կ'երթայ ու ոչխարները Իր հետեւէն:

Քրիստոսի հետեւելու միջոցին նախ պիտի առնապինք, սակայն խաչէ եւ մահէ անցնելէ վերջ պիտի հասնինք կատարեալ եւ անվերջ ուրախութեան:

Քրիստոսի հետեւելու միջոցին յաճախ առանձին հետեւելու ենք Իրեն: Պիտրոս եւ Յովհաննէս մտերիմ բարեկամներ էին: Անոնք միասին էին գերեզմանին քով, նաւակին, տաճարին եւ բանտին մէջ: Մէկ էր անոնց սիրոյ եւ պաշտամունքի առարկան, սակայն անոնցմէ իւրաքանչիւրը առանձին հետեւելու էր Իր Տէրոջը: Լուսթեան եւ առանձնութեան մէջ հոգիներ իրենց կատարեալ զեղիցկութեան կը հասնին: Ուստի մեր վարդապետը երբեմն կ'ստիպուի մեզի ըսել՝ «Բու ի՞նչ հոգդ է, դուն իմ հետեւէս եկուր»:

Ի՞նչ որ ալ ըլլան մեր կեանքի ու մահուան պարագաները՝ մեր միակ նպատակը թող ըլլայ «զԱստուած փառաւորել»:

«Եւ բոլոր շնորհաց Աստուածը, որ մեզ Իր յաւիտեան կամքին կանչեց, Քրիստոս Յիսուսի ձեռքով քիչ մը ատեն նեղութիւն կրկնէ՞ր վերջ, Ինք ձեզ կատարեալ ընէ, հաստատէ, զօրացնէ ու հիմնէ: Իրեն փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՎԵՐՋՈՒԹԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՕՐԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

(Շար. 7րդ Թիւէն)

Անապատի մուտքի եւ յուսալարեալ փորձառութենէն դէպի պանծալի եւ աւատարեւոյ խոտացեալ երկիրը

Արդ նկատելիք մէկ բան միայն մնաց. այն է թէ ի՞նչպիսի կեանք կ'աշխարհէ Աստուած որ Իր զաւակները ապրին:

Այս խնդրը, որուն համար կարելի է, դիտելէ առաջ ակնարկ մը դարձնենք այն հիմնալի առարկայական դասին, զոր Աստուած մեզի կուտայ Իր ժողովուրդին, Իսրայէլի փրկութեան միջոցով: Պողոս առաքեալ կ'ըսէ թէ Իսրայէլի ժողովուրդին Եգիպտոսէն ազատելու փորձառութիւնը եւ անոր ճամբորդութիւնը դէպի խոտացեալ երկիրը օրինակներ կամ ստիպանք են ու մեզի իրաւ ըլլալու համար դրուած: (Ա. Կոր. Ժ. 11) Անոնք լեցուն են դասերով: Աստուած կ'ըզէ որ մենք քննենք Իր ընտրեալ ժողովուրդին օրինակներն ու թերութիւնները եւ խոտաւորենք, որպէս զի մենք ալ չտանջուինք անհաստատութեան չար սիրտ մը կրելով:

Եգիպտոս օրինակն է աշխարհի ու մեղքի: Խոտացեալ

երկիրը, Քանոն, օրինակն է սրբացման ու այս աշխարհի վրայ տարեւելի Յաղթական կեանքին:

Զկար Եգիպտոսի վերակացու մը որ մեղքին չափ անողորմ ու անգութ ըլլար: Իսրայէլացիք ինքզինքնին ազատելու անկարող էին: Որքան աւելի անոնք ինքզինքնին ազատելու ջանային, նոյնքան աւելի կը ծանրացնէին Եգիպտոսի անոնց բռնութիւնը: Նոյնպէս նաեւ մեղաւորը անկարող է ինքզինք փրկել: Անոր ճիգերն ու ջանքերը ապարդիւն են: Փրկութիւնը միմիայն շնորհքին արդիւնք է:

Աստուած արեւն թափելով գործեց Իր փրկութիւնը: Զատուան Գառնակը Քրիստոսի մէկ օրինակն է: «Քրիստոս մեր Զատիկը մեզի համար զսուցեցաւ»: (Ա. Կոր. Ե. 7) Գառնակը կը մորթուէր ու անոր արեւն կը թափուէր ուրիշի մը տեղը: Իւրաքանչիւր հրեայ կարող է ճշմարտօրէն ըսել՝ «Այդ գառնակը իմ տեղս կը մեռնի»: Սակայն այն արեանը թափուելովը ո՛չ մէկը փրկուեցաւ: Փրկութիւնը գտնելու համար Իսրայէլացիք քսելու էին արեւն իրենց դրանդեացը ու սեմբուռն վրայ: Այսինքն ամէն անհատ ինք ընդունելու եւ իրեն իւրացնելու էր իր տեղը կատարուած զոհը: Միմիայն սրսկուած արեւն էր որ անհատի մը փրկութիւն կը պարգեւէր: Քրիստոս մեռաւ անստուածներուն համար: Որպէս զի ես իմ գործած մեղքերուս համար չմեռնիմ, ընդունելու եմ Քրիստոսի փոխանորդական մահը: «Որոնք որ զԻնք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ սրբիները ըլլալուն»: (Յովհ. Ա. 21):

Ասոր յաջորդեց Իսրայէլացիներուն հրաշալի կերպով Կարմիր Ծովէն անցնիլը, զոր Պողոս կը նմանցնէ մկրտութեան: «Մեր հայրերը ամենն ալ ամպին տակ էին, ու ամենն ալ ծովէն անցան, եւ ամենն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովուն մէջը» (Ա. Կոր. Ժ. 2): Թէպէտեւ անոնք ոչ ծովուն ջուրին եւ ոչ ալ ամպին հետ շփման եկան եւ անոնց կատարեալ սրբացումը տեղի ունեցաւ Յորդանանէն անցնելու առթիւ:

Ի՞նչ էր Կարմիր Ծովուն նշանակութիւնը Իսրայէլի համար: Անոնք Կարմիր Ծովէն անցնելէ առաջ իրենց ընդունած արեանը միջոցով փրկուած էին, սակայն տակաւին իրենց թշնամիներուն մէջ կը բնակէին ու կ'ապրէին:

Եգիպտոսի անողորմ կերպով հաւածեցին Իսրայէլացիները զանոնք կրկին գերութեան տանել փորձելու որոշումով Սակայն անոնք ծովէն անցնելով ազատեցան իրենց թշնամիներուն իշխանութենէն: Եգիպտոսից ալեւալ չբարեցան Իսրայէլացիներուն, ոչ ալ որ եւ է նեղութիւն պատճառեցին անոնց: Իրենց դիակները փռուած մնացին ծովուն եզերքը:

Ի՞նչ է ասոր նշանակութիւնը մեզի համար: Յիշեցէ՛ք թէ Քրիստոսի մահը երկու կողմեր ունի: Անիկա մեռաւ մեր մեղքերուն համար, մեզի համար, ՄԵՐ ՏԵՂԸ: Սակայն Պողոս կ'ըսէ թէ մենք ալ Անոր հետ մեռնելու ենք: «ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ԽԱՅՆ ԵՒԼԱՅ»: (Գաղ. Բ. 20). «Դուք ձեր անձերը մեղքի մեռած սեպեցէ՛ք»: (Հռովմ. 2. 11) Իսրայէլացիք իրենց մեղքերէն ազատեցան թափուած ու սրսկուած արեան միջոցով, սակայն անոնց թշնամիներէն ոմանք հաւածեցին զանոնք: Թշնամիները մեռան Կարմիր Ծովուն քով՝ մինչ իրենք ազատեցան: Եգիպտոս օրինակն է մեղքի եւ աշխարհի: Քրիստոս մեզ Եգիպտոսի մէջ գտաւ ու մեր տեղը մեռնելով ազատեց մեզ մեղքին պատիժէն: Սակայն նոյն իսկ մեր դարձէն յետոյ կարգ մը մեղքեր, ինչպէս՝ բարկութիւն, հպարտութիւն, նա-

խանձ, ցանկութիւն, հոգ, ագահութիւն մեղի հետեւեցան, մեղ տառապեցողքին եւ մեր պարտութեան ու թշուառութեան եւ երբեմն ալ ժամանակաւոր նուաճման պատճառ եղան: Ո՞ւր կայ աղատութիւն այս մեղքերէն, եւ ճշմարիտ յաղթութիւն: Միմիայն Կարմիր Ծովուն մէջ, որ օրինակն է մկրտութեան, այսինքն մեռնելու մեղքին եւ յարութիւն առնելու արդարութեան: Ասիկա է Քրիստոսի հետ խաչը ելլել, որպէս զի կարենանք մեր անձերը մեղքին մեռած սեպել:

Եգիպտացիք մեռած տեսնուեցան ծովուն եղերքը: Իսրայէլացի մը կրնար երթալ եւ իր նախկին վերակացուն ինկոծ տեսնել ու ըսել «Ահա մեռած է, այլ եւս երբեք պիտի չենդէ գիտ»: Ուրիշ մը կրնար ըսել՝ «Ահա իմ վերակացուն ալ, որ այլ եւս պիտի չկարենայ զիս ճնշել»:

Ճշմարիտ է թէ երբ մենք Քրիստոսի հետ կը մեռնինք, կը մեռնինք մեղքին: Կրնանք մեր անձերը մեղքին մեռած սեպել. մեռած բարկութեան, հպարտութեան, նախանձի, ագահութեան, ցանկութեան, սրտք մեր վերակացուները եղած էին: Նկատեցէք սովայն թէ Պօղոս չըսէր՝ «Մեղքը ձեզի մեռած է»: Իսրայէլը հալածող Եգիպտացիները մեռան, բայց Եգիպտոսի ժողովուրդը (մեղքը) տակաւին գոյութիւն ունէր: «Իմ անձնական մեղքերս կրնամ մեռած սեպել, սովայն անոնց ետեւ կեցող մեղքը տակաւին շատ կենդանի է», ըսած է մէկը:

Շատ մը քրիստոնեաներու անդադար մեղքի մէջ իշխաւուն պատճառը այն է որ անոնք կը ջանան հնազանդիլ Պօղոսի պատուէրին միայն մէկ կէտին: Անիկա կը հրամայէ «Ձեր անդամները անիրաւութեան գործիք ըլլալու մի՛ ընծայէք, մեղքի»: Շատեր կը ջանան այս պատուէրին համեմատ տարիլ, սովայն Պօղոս նաեւ կը յարէ՝ «Հապա ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք, որպէս թէ մեռելներէն ողջացած» (Հռովմ. 2. 13): Այս էր Քրիստոսի մահուան նշանակութիւնը Իրեն համար: Անիկա Իր կամքը բացարձակօրէն Աստուծոյ հպատակեցուց: «Ահա կուգամ ես Քու կամքը ընելու» (Եբր. Թ. 10): «Ես միշտ Անոր հաճելի եղած բաները կ'ընեմ» (Յովհ. Ը. 29) կ'ըսէ մեր Տէրը: Երբ, եւ որքան ժամանակ որ իմ կեանքս անպայմանօրէն Աստուծոյ յանձնեմ, մեղքը իմ վրաս պիտի չեղի (Հռովմ. 2. 14):

Հատկաւ կը նշանակէ ազատիլ ՄԵՂՔԻՆ ՊԱՏԻՃԻՆ: Կարմիր Ծովէն անցնելը կը նշանակէ ազատիլ ՄԵՂՔԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷՆ: Սովայն նոյն իսկ անապատին մէջ Աստուծոյ ժողովուրդը պէտք ունէր սորվելու թէ Աստուծոյ եւ միմիայն Ասով իրենք ԱՄԷՆ ԲԱՆԻ մէջ, ԱՄԷՆ ԱՏԵՆ, ԲՈՂՈՐ իրենց պէտք եղածը ունէին. (Բ. Կոր. Թ. 8):

(Շար.)

ՄԻԱՅՆ ՏՂԱՅ ՄԸ

Սկովսիոյ մէջ, հաւատարիմ քարոզիչ մը աւտուռ կանուխ եկեղեցին հասնելով իր հոգաբարձուներէն միոյն հանդիպեցաւ:

— «Պատուելի» ըսաւ այս վերջինը «կանուխ եկայ քեզ տեսնելու համար, ինչու որ կարեւոր ըսելիք մը ունիմ. ինծի կը թուի թէ ձեր քարոզչութեան եւ ընդհանուր գործունէութեան մէջ արմատական սխալ մը կայ: Ամբողջ տարուան մը ընթացքին միայն մէկ

անգամ աւելցած է եկեղեցիին վրայ եւ այն ալ տղայ մը . . . :

— «Գիտեմ եղբայր, բայց Աստուած գիտէ որ բոլոր սրտով աշխատած եմ պարտականութիւնս կատարելու, գալով արդիւնքին, միայն իրեն կը վստահիմ»:

— «Այո՛, այո՛» ըսաւ հոգաբարձուն, բայց «Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք» եւ մէկ հատիկ անգամ մը, այն ալ տղայ մը . . . շատ թեթեւ փափակ մըն է խոր հաւատք եւ գործնական եռանդ՝ ապացուցանելու համար»:

— «ձիշդ է» հառաչեց ալեւոր երէցը. «բայց ես մեծ յոյսեր ունիմ այդ պատանի բալլերն ին վրայ»:

Պաշտամունքէն յետոյ սրտաբեկ, ծերունի երէցը եկեղեցիին բակէն կ'անցնէր խոհուն եւ լուրջ մտածողութեամբ: Ամէն ոք մեկնած էր, բայց ո՛չ, մէկը կար, տղայ մը: Այդ տղան բալլերն Մօֆաթն էր: Նա հնազանդ եւ գուրգուրոտ ակնարկով մը կը դիտէր դուռը ու ծերունին. հազիւ քանի մը քայլ առած էր, պատանին պատկառանքով մօտեցաւ անոր:

— «Ի՛նչ է բալլերն», հարցուց երէցը:

— «Կը խորհի՛ք թէ, եթէ շատ աշխատիմ, զարգանալով կրնամ քարոզիչ մը ըլլալ»:

— «Քարոզի՛չ մը»:

— «... կամ թերեւս միսիոնար մը»:

Արցունքի կամ ինքն ինքն ծերունիին աչքերէն. «Այս խօսքը կ'սփոփէ խոցեալ սիրտս բալլերն, հոս կը տեսնեմ աստուածային ձեռքը . . . այո՛ կը խորհիմ թէ քարոզիչ մը կրնամ ըլլալ, Աստուած օրհնէ քեզ որդեակ իմ»:

Շատ մը տասնեակ տարիներ յետոյ տարեց միսիոնար մը Ափրիկէի խորերէն Լոնտոն եկաւ: Իր անունը միշտ յարգանքով կը յիշուէր. երբ ժողովի մը երթար, բազմութիւնը յոտնկայս կ'ընդունէր զինքը, խօսած պահուն յարգալիք լուծիւն մը կը պահուէր: Իր առջեւ իշխաններ գլխաբաց կը կենային, ազնուականներ կը մրցէին զայն իր հիւր հրաւիրելու: Բալլերն Մօֆաթ* երկրի վրայ, քրիստոսի եկեղեցիին մեծ բաժին մը կցած էր: Յաջողած էր Աւետարանին ազդեցութեան տակ բերել Ափրիկեան վայրենիներու էն կատարի ցեղապետը: Նա մոռցուած ցեղերու տարած էր իր թարգմանած Աստուածաշունչը. թանկագին տեղեկութիւններով հարստացուցած էր Անգլիոյ Արքայական Աշխարհագրական Ընկերութիւնը (Royal Geographical Society) պատիւ բերած էր իր հայրենիքին ու սատարած էր աշխարհի միսիոնարական գործին, ու այս . . . «Միայն տղայ մըն էր»:

*) ԿԵՆՍ. ՄԱՆՍԹ.— Բ. Մօֆաթ ծնած է 1795 թ. Սկովսիոյ մէջ: Մօրաւան միսիոնարական ժողովի մը ազդը հետաքրքրած է զինքը միսիոնարական գործով: Հետգիտէ զգալով աստուծային կոչումը, ինքզինքը առաջարկած է Լոնտոնի միսիոնարա-

ԴՈ՛ՒՆ ԽՕՍԷ, ՏԵՐ

Ո՛վ Տէր խօսէ, քանզի Քու ծառադ մտիկ կ'ընէ. Ա. Թաղ. Գ. 9

Երբ Իսրայէլի ժողովուրդը լսեց սրտառումներն ու կայծակները եւ փողին ձայնը ու լեռան մխալը, վախ-
ցան ու ըսին Մովսէսի, Դուք խօսէ, մեզի հետ եւ
մտիկ կ'ընենք, բայց Աստուած թող չխօսի մեզի հետ,
որպէս զի չմեռնինք. Ելից. Ի. 18:

Մեղքը, Ագամով մտաւ աշխարհ, եւ մեղքէն ալ
մահը. Հոովմ. Ե. 12, 2. 21-23: Մեղքը Աստուծոյ առ-
ջեւ տառիկ եւ պիղծ է. Օրին. ԻԵ. 16, Առակ. 2. 16,
Առակ. ԺԱ. 1: Իսկ Աստուծոյ սրբութեան յատկու-
թեանը առջեւ մեղքը չկրնար կայնիլ եւ մեղաւորը
զատապարտուած է յաւիտեանական մահուամբ, վասն-
զի Անիկա մեղաւորին բարկացած է. Ամովս. Թ. 1. 5:
Քանզի մեղաց վարձքը մահ է, Ծննդ. Բ. 17, Եղեկ. ԺԸ. 4, Հոովմ. 2. 23, եւ մարդս որ Ագամի ցեղէն է,
մեղքով յղանալով կը ծնի. Ծննդ. Ե. 3 Սաղ. ԾԱ. 5,
այս պատճառով բոլոր արարածները Աստուծոյ բար-
կութեան տակ են:

Արդ, Իսրայէլի ժողովուրդին այդ ահաւոր տեսա-
րանէն վախնալուն բուն պատճառը այն է, որ Աստ-
ուած կը յայտնուի իրենց օրէնքի միջոցաւ, վասն զի
օրէնքը մեղքին այժմ է եւ մեղքը մահուան խայթոցն
է Ա. Կորն. ԺԵ. 56, քանի որ բոլոր արարածները զա-
տապարտուած են մահուան օրէնքին տակ, Հոովմ. Ե.
12, 18: Գաղ. Գ. 13, ուստի լեռան տեսարանը մահուան
սարսափը կ'ազդէր անոնց վրայ, եւ չէին ուզեր որ
Աստուած խօսի իրենց հետ, այլ Մովսէսի ըսին՝ Դուք
խօսէ մեզի հետ ու մտիկ կ'ընենք, բայց Աստուած
թող չխօսի մեզի հետ՝ որպէս զի չմեռնինք:

Իսկ այս ժամանակուան մէջ, Աստուած՝ Իր Հայ-
րական սիրովը եւ շնորհքովը յայտնուած է մեզի Իր
յաւիտեանական Բանն Յիսուս Քրիստոսի միջոցաւ, եւ

կան ընկերութեան, եւ ձեռնադրուած է նշանաւոր ձան Ուիլ-
եմսի հետ նոյն օրը: 1866 թ. հասաւ Բարեկուտոյ Գլուխը (Ափրիկէ):
Անեկեակայելի դժուարութիւններէ յետոյ միայն կրցաւ Թա-
փանցել երկրին խորերը: Համբուն վրայ բազմիցս Թեղաբունե-
ցաւ. իրեն զգուշանալ անգում եւ արիւնարբու ցեղապետէ մը:
Մօֆամ անխուով հաւատքով յառաջ գնաց, յիշ յետոյ պատճառ
եղաւ. ցեղապետ Ափրիկանէի քրիստոնէութեան դարձին: Կառա-
վարութիւնը շատոնց գին դրած էր Ափրիկանէի գլխուն համար:
Մօֆամ կառավարելէն ներկայացնելու տարաւ. փոխուած ցեղա-
պետը: Պաշտօնատարը չէր կրնար հաւատալ իր աջերուն...:
Մօֆամ, իր Ընկերութեան խնդրանքին վրայ Պէքտանա գնաց:
Մտերմանալով վատափութիւնը շահեցաւ բնիկներուն ու Թանկա-
գին ծառայութիւններ մատուց անոնց, ազատելով զանոնք Թշու-
մի արշաւանքներէ եւայլն. հոն Թարգմանեց Սուրբ Գիրքը եւ
հրատարակեց երգեր ու Թերթիկներ. իր շնորհիւ էր որ Փարիզի
Միսիոնարական Ընկերութիւնը կրցաւ հոն դրկել իր առաջին
միսիոնարները: Մօֆամ էր որ իր փեսային Տէյվիտ Լիվինկս-
թընի մէջ դրաւ իր կոչումին դրական ուղղութիւնը, օգնելով
անոր իր մեծ գործին պատրաստութեան:

ոչ թէ օրէնքի միջոցաւ. նոյն շնորհքով արատուած
ենք Աստուծոյ բարկութենէն, եւ հաշտուած ենք Իրեն
հետ Յիսուս Քրիստոսի միջոցաւ. Հոովմ. Ե. 16, Եփես.
Բ. 16:

Ուստի մենք հաւատացեալներս ի Յիսուս՝ կը մօ-
տենանք, ոչ թէ կրակով վառուած լերան, կամ մէզին
ու խաւարին եւ մրրիկին ու փողին հնչուելուն եւ
խօսքերու ձայնին, այլ «Սիօն լեռան ու կենդանի Աս-
տուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին եւ ըլլա-
ւոր հրեշտակներուն, ու երկինք զրուած անդամիկ-
ներուն, հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին, եւ Աս-
տուծոյ՝ որ ամենուն Դատաւորն է, ու արդարաց հոգի-
ներուն որ կատարուեր են, եւ Յիսուսի, որ նոր ուխ-
տին միջնորդն է» Երբ. ԺԲ. 18-24 եւս աւելի համար-
ձակութեամբ «կը մօտենանք շնորհաց աթոռին առ-
ջեւ» Երբ. Գ. 16. ուստի Մամուլէի հետ համարձակու-
թեամբ կ'ըսենք, «Ո՛վ Տէր խօսէ, քանզի Քու ծառադ
մտիկ կ'ընէ»:

Ո՛վ, Հօր Աստուծոյ անհուն սէրն ու շնորհքը Քու
մէջը եւ Քեզմով մեզի յայտնուող Միածին Որդի Աս-
տուծոյ՝ Յիսուս Քրիստոս, մեզի հետ խօսողը Մով-
սէս կամ ուրիշը թող չըլլայ, զի Դո՛ւն անոնց ներ-
շնչողն ու առաջնորդն ես, Դուք խօսէ մեզի հետ եւ
Քեզի մտիկ ընենք, քանզի Դուք ես մեր կատարելու-
թիւնը: Այո՛, անոնք խօսքերդ կրնան մատուցանել
մեզ, բայց կարող չեն պարզեւել մեզ անոր հոգին,
քաղցր եւ հաճելի խօսքեր կրնան հաղորդել մեզ,
բայց եթէ Դուք չզործես անոնց մէջէն, կարող չեն
բնաւ ազդել մեր սիրտերուն, անոնք Քու խորհուրդ-
ներդ կրնան բացատրել, բայց կարող չեն զիրքը բա-
նալու եւ ոչ ալ անոր նայելու. Դուք միայն ես կարող
առնել Գիրքը ու անոր եօթը կնիքները բանալ: Անոնք
պատուիրանքներդ կրնան հրատարակել, բայց դա-
նոնք կատարելու համար օգնական միայն Դուք ես,
անոնք ճշմարիտ ճամբան կրնան ցուցնել մեզ, իսկ
անոր մէջ քալելու զօրութիւն տուողն ու առաջնորդը
միայն Դուք ես. մեր մարմնի բնութիւնը անոնք կրնան
յղկել, բայց միտքերը բացող ու սիրտերը լուսաւորող
ու ծարաւած հոգիները յաղեցնողը Դուք ես միայն:

Ուրեմն մեզի հետ խօսողը միայն Դուք եւ իր, ո՛վ
Հօր Աստուծոյ անհուն սիրովը մեզի յայտնուող յաւի-
տեանական Բանն Աստուծոյ, քանզի «Դուք յաւիտեա-
կան կենաց խօսքեր ունիս»: Խօսէ մեզի որպէս զի
այս մովթ աշխարհին մէջ Քու կենաց խօսքերովդ
կշտանանք, մինչեւ հասնինք Քեզի ու յաւիտեանս
Քեզի հետ ըլլանք: Ամէն:

Միւրեւի անապաշխար ընթերցող, փախիւր մեղքէն
ու անոր անէծքէն, եկուր եւ երջանկացիր Քրիստո-
սով: Ինչո՞ւ ամչնալով եւ վախով մօտենաս Անոր,
քանի որ կարելի է համարձակութեամբ Իրեն ըսել,
«Ո՛վ Տէր խօսէ, քանզի Քու ծառադ մտիկ կ'ընէ»:

Անոր արիւնովը ծախու առնուած, անաբժան

ՍԱՀԱԿ ՇԱՆԼԵԱՆ

Ս. ԴՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐՈՒՄ. «Փ. ՊԵՏԵՐՍ»

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԱՌԱՋԻՆ ԷՁԸ

Է. ԳԼՈՒՆ

ԱՐԵՎԱԿ, ԼՈՒՍԻՆ ԵՒ ՍՍՏՂԵՐ

«Աստուած ըստ, Երկինքի հաստատութեանը մէջ Լուսաւորները ԸԼԼԱՆ, որպէսզի ցարեկը գիշերէն զատեն, եւ նշաններու ու տառերներու եւ օրերու ու տարիներու համար ԸԼԼԱՆ: Ու երկինքի հաստատութեանը մէջ Լուսաւորները համար ԸԼԼԱՆ, որպէս զի երկրի վրայ Լոյս տան, ու այնպէս եղաւ: Եւ Աստուած երկու մեծ Լուսաւորներն ըրաւ, մեծ Լուսաւորը ցարեկուան իշխելու համար, աստղերն ալ ըրաւ: Եւ Աստուած երկինքի հաստատութեան մէջ գրաւ զանոնք, որպէս զի երկրի վրայ Լոյս տան եւ ցարեկուան ու գիշերուան իշխեն, եւ Լոյսը իստաւրէն զատեն, ու Աստուած տեսաւ որ բոլորն են, եւ իրիկուն ու առաւ ԸԼԼԱՆՈՎ Զորքը օրը եղաւ» (Ծննդ. Ա. 14-19):

... Որոշ ժամանակաշրջանէ մը յետոյ՝ ստեղծագործութեան ջորքորդ օրուան մէջ երկինքի վրայ փայլել սկսան երկու Լուսաւորներ, որոնք մեզի կը ծառայեն ժամանակի բաժանումն ընելու: Այս իսկ շատ կարեւոր գործ մըն է. քանզի մեր ամեւնայաւ ժամացոյցներն ալ չպիտի կարենային մեզի միշտ կառարեալ ճշդութեամբ ժամանակը ցուցնել: Միայն երկնային մարմիններն են բոլորովին վստահելի ժամանակաշափերը (Chronometre), որոնք նոյնիսկ մէկ երկվայրկեան ջնն շնչիր: Եմէ ուղէինք ժամանակը ճշդել առանց անոնց, քիչ յետոյ զարհուրելի շփոթութեան մը պիտի մասնաւորինք. այո՛, մարդ նոյնիսկ ժամանակը բաժնելու գաղափարը չպիտի ունենար, եմէ անոնց միջոցաւ ցորել ու գիշեր, ամիս ու տարի գոյութիւն առած չլըլային: Եւ եմէ բունեանայինք ժամանակի բաժանում, մեզի համար կանոնաւոր մարդկային կեանք մը անկարելի պիտի դառնար: Ահա՛ այդ է պատճառը որ ստեղծագործութեան օրերէն մինչեւ Յովնանու Յայնուծինը՝ Աստուծոյ խօսքին մէջ ժամկուտ ու ժամանակներու մեծ կարեւորութիւն տրուած է: Մէջ բերենք միայն հետեւեալները. — «Ժամանակաց լրանալուն», «Ժմ ժամանակս դեռ հասած չէ» (Յովն. Է. 6) եւ ասոնցմէ զատ Յայտ. ԺԲ. 14 եւ Ժ. 6:

Ուրեմն լուսինն ու արեգակը Լուսաւորելու եւ ժամանակի բաժանման համար մեզի տրուած են, բայց եմէ խորհէինք որ այս է անոնց միակ նպատակը, պիտի նմանէինք այն մութացեալին, որուն թագաւորը ամէն օր՝ որոշ ժամու մը մէջ քովէն անցնելու ատեն ողորմութիւն մը կուտայ, եւ որ ատկէ ազդուած կ'երեւակայէ մէ թագաւորին միակ գործն է ատեն ատեն դուրս ելլելով իրեն մը քանի փրանք տալ: Ո՛հ, երբե՛ք, Աստուծոյ այդ հսկայ ստեղծագործութիւնները միայն մեզի համար գոյութիւն չունին: Անոնք հաստատուած են նաեւ Արարչին փառքը ասելցնելու եւ ուրիշ, մասամբ մեզի անծանօթ, նպատակներու համար: Այսպէս արեւը կը Լուսաւորէ ո՛չ մէ միայն մեր փոքր երկրագունդը, հապա նաեւ ուրիշ աւելի քան 200 մոլորակներ, որոնց մէջ կը գտնուին մեր երկրէն 1400 անգամ մեծ Լուսնածագը եւ 700 անգամ մեծ Երեւակը իր ունի լուսիններով միասին: Եւ արեգակը այս մարմինները ո՛չ միայն կը Լուսաւորէ, հապա իր քաշողական հուժկու ուժովը զանոնք կ'ստիպէ իր շուրջը դառնալու եւ իրեն ընկերանալու անդիմադրելիօրէն, մինչ

ինքը կը Թռչի անսկզբագին անծայրանիս անջրկեալին մէջէն:

Յիսակ է մէ Սուրբ Գիրքը համաձայն ընդհանուր մարդկային տեսակէտին՝ արեգակն ու լուսինը կը նկատեն իրի գլխաւոր Լուսաւորները սկիզբի եւ աստղերը միայն անցողիկ կը լինեն: Յիսակ է մէ Յիմա Յազրիտ հաշիւներով հաստատուած է որ լուսինը հազարաւոր անգամ փոքր է երկնակամարին վրայ փայլող ու եւ մէկ հաստատուն աստղէն եւ շատ աննշան գիշեր մը կը գրաւէ արեգակնային դրոճեան մէջ: Բայց դարձեալ անտեղի է Աստուծոյ խօսքը մեղադրել բոլորով մէ ան կը խօսի ազեմներու լեզուով: Վասն զի Աստուծոյ իր խօսքը տուած է ոչ մէ միայն մի քանի հնգար հիմնականներու՝ հապա բոլոր մարդոյ համար, որոնցմէ միլիոն տարիներ ճակտի քրտինքով կը ծարւն իրենց հացը եւ պատեհութիւն չունին Լուսնազգիտութիւնն ու բնագիտութիւնն ուսմանը: Եւ քանի որ Աստուծոյ հազարակցիկ կ'ուզէ նաեւ իր այս զեւակներուն հետ, որոնք թեւ իր հայրական սրտին աւելի մօտ են քան մէ շատ մը մեծ գիտնականներ, բնականօրէն կը խօսի Ան պարզ, սովորական եւ համաճարկային լեզուով, որպէսզի բոլորն ալ զինք հասկնան: Եմէ Սուրբ Գիրքը խօսէր գիտական լեզուով, ի՞նչ նիսի հասկնային ատկէ միլիոնաւոր մարդիկ:

Մտորակ, արեգակն ու լուսին, ահա՛ երեք գլխաւոր աստղերը երկնային մարմիններու: Միայն մէկ արեգակ չկայ, այն միլիոնաւոր հաստատուն աստղերն ալ, զորս մենք կը տեսնենք մեծ հեռադիտակի միջոցաւ, արեգակներ են՝ շատեր աւելի պայծառ, քան մեր արեւը. միայն ահարկու հեռաւորութեան պատճառաւ անոնք այնքան փոքր եւ աղօս կ'երեւան:

Ինչպէս վերը ակնարկեցինք, մեր արեգակին շուրջը կը դառնայ ո՛չ միայն մեր երկիրը, հապա նաեւ ուրիշ աւելի քան 200 մոլորակներ՝ ոմանք աւելի մեծ, իսկ ուրիշներ աւելի փոքր քան մերինը, եւ շատեր մերինին նման ունին օդ ու ջուր, ամպ ու հով, ցամաք ու ծով, լեռ ու ծոր, ամառ ու ձմեռ, գիշեր ու ցորեկ եւ այլն եւ այլն: Միայն չենք գիտեր մէ արեւօք անոնց վրայ ալ կենաւորներ, — բոլոր, կենդանի եւ ուրիշ բարձրագոյն արարածներ կը բնակին: Երկրի վրայ Թերեւս երբեք պատեհութիւն չպիտի ունենանք զայս գիտնալու:

Մեր լուսինն ալ իր տեսակին մէջ միակը չէ երկնակամարին վրայ, միւս մոլորակներն ալ իրենց լուսինները ունին՝ մին երկու հատ, ուրիշ մը չորս՝ երրորդ մը մեծ եւ չորրորդ մը ունի հատ: Ուստի այդ մոլորակներուն գիշերները Լուսաւորուած են հրաշալիօրէն: Եւ այս բոլոր լուսինները մերինին նման շատ աւելի փոքր են քան մէ այն մոլորակները, որոնց շուրջը երկնք կը դառնան:

Մենք փորձառութեամբ գիտենք մէ ինչպիսի հանգամանք ունի երկիր մը կամ մոլորակ մը: Բայց լուսինի կամ արբանեակի մը վրայով միայն քանի մը քան գիտենք: Ան ունի սառած, ամառ, ապառաժուտ եւ լուսնային մակերես մը, որուն վրայ ջնն տեսնուիր եւ ո՛չ մէկ ծով կամ լիճ եւ կամ անառ: Աստուծոյ գէտները ատկէ անոր լեռները չափած են՝ անոնց ձգած շուրջին նայելով եւ գտած որ անոնցմէ ոմանց բարձրութիւնը 20,000 ոտքէն աւելի է, — աւելի բարձր քան Երուսաղիմ ամենէն բարձր լեռը՝ Մօնթալան: Քանի որ լուսինը օդի լուս. կամ մնայնորտ չունի, անոր երկնակամարը կապոյտ չ'երեւանար, հապա սեփ սեւ եւ այդ սեւ երկինքին վրայ արեւը կը փայլէ կուրացնող պայծառութեամբ մը, ան ալ մերինին նման ոչ միայն 12 ժամ, հապա 14 օր անընդհատ առանց գիշերի, եւ վերոյիշեալ մերկ լեռներուն վրայ կը Թափէ այնպիսի հրային ջերմութիւն մը, որ կապարի նման դիւրահալ մետաղները պիտի կարենային հալիլ:

առանց դժուարութեան: Հակառակ այդ շացուցիչ արեւին՝ լուսնի վրայէն կէսօրին իսկ աստղեր կը տեսնուին եւ աւելի յատակ կերպով, քան թէ երկրի վրայէն գիշեր ատեն. վասն զի հոն անոնց հառաքայններու զօրութիւնը կոտորող օդի խառնուածիւն չունի: Ուշագրաւ են նաեւ վերջալոյսերը, երբ արեգակը 14 օր տեսող ցորեկէ մը ետքը մարի, մէկ կողմէն լուսնի ձորերը ակնհայտօրէն մը մէջ սեւ խառարով կը ծածկուին, իսկ միւս կողմէն ալ անոյր լեռներուն գագաթները ժամերով լոյսով ողողուած կը մնան, եւ ապա դարձեալ օդի զգոյութեան պատճառաւ: Եթէ մենք այդ ժաման անկէ մեր երկիրը դիտէինք, սլոտի տեսնէինք թէ ինչպէս արեւելեան հորիզոնէն վեր կը բարձրանար նոսր թափաքայն հրաշալիօրէն գեղեցիկ եւ 15 անգամ աւելի մեծ քան լուսինը՝ երկրի վրայէն դիտուելու պարագային:

Լուսնի վրայ գոյութիւն չունին եղանակներ: Միջոցին մէջ կը թաւալի ան դարերէ ի վեր՝ միշտ անփոփոխ, ստանաւ ու անկենդան: Չենք գիտեր թէ հոն ո եւ է ատեն կեանք գոյութիւն ունեցած է:

Որքա՞նք որ մեզի ծանօթ է, Լուսնեագի եւ միւս մոլորակներուն արբանեակներն ալ մեր Լուսնին յատկանիշներն ունին:

Լուսնիներու կամ արբանեակներու բոլորովին հակապատկերն է արեգակը: Մինչ լուսնին վրայ մտնել կ'իշխէ, արեւը աղբիւրն է կեանքի եւ ուժի: Այս հսկայ աշխարհը աւելի քան մէկ միլիոն անգամ մեծ է մեր երկրէն, սակայն մեզի հազիւ լուսնին չափ մեծ կը թուի, վասն զի մեզմէ 400 անգամ աւելի հեռու է քան լուսինը: Ան Յշմարտապէս հրային ովկիանոս մըն է, բաղկացած հալած հրաշէկ մետաղներէ եւ շրջապատուած հաշարաւոր մզոն բարձր բոցերէ: Հոն տիրող ջերմութիւնն անըմբռնելի է եւ հարիւր հազարաւոր աստիճանի կը հասնի, եթէ ոչ չափի կրնար այնքան մեծ հեռաւորութենէ մը երկրի ափողջ մակերեսն ու անոր բոլոր բնակիչները կենդանացնել: Զօրաւոր հեռագիտակներով կ'ընտելու երկրի վրայէն տեսնել թէ ինչպէս այս ահարկու գունդին ներսերէն կրակէ վիթխարի սխներ պարբերաբար հազարաւոր փլուզմէր վեր կը բարձրանան: Բայց քիչ յետոյ դարձեալ հրային ծովու մէջ կը թափին եւ կրակէ կոհակներու մէջ կը գոյացնեն սոսկալի պոռոյտքներ, որոնք խորունկնալով արեգակին մինչեւ ներսերը կը հասնին եւ մեզի իբր բիծ կ'երեւին: Ահա՛ ասոնք են որ արեգակին բիծերը՝ կը կոչուին:

Աստղերն ալ, որոնք երկնակամարին վրայ այնքան հանդարտ կը պլպլան, այդպիսի արեգակներ, հրային ահարկու աշխարհներ են, շատեր աւելի տաք, աւելի լուսաւոր եւ աւելի մեծ քան մեր արեւը: Օրինակի համար, նորագոյն գննութեանց համաձայն, Շնիկ աստղը 5000 անգամ աւելի լոյս ունի քան մեր արեգակը: Եթէ ան մեզի այնքան մօտ գտնուէր որքան արեւն է, բոլորս ալ պիտի խորովէինք ու ոջնջանայինք: Ասոր հակառակ կան ուրիշ աստղեր ալ, որոնք պակաս լոյս ունին, կը թուի թէ քիչ մը պաղած են: Կը շողան կարմրագոյն լոյսով մը: Կը գտնուին նաեւ աստղեր, որոնք կապոյտ, կանաչ եւ ծիրանեգոյն փայլ ունին: Ուրիշներ ալ իրենց գոյնը կը փոխեն կամաց կամաց: Յիշենք նաեւ փոփոխական կոչուած աստղերը, ասոնք այնպիսի արեւներ են, որոնց լոյսը շարժանքով, նոյն իսկ ամիսներով հեռագիտէ կը նոսալի, բայց յետոյ կ'սկսի դարձեալ զօրանալ: Ասոր գաղափիքը հետեւեալն ըլլալ կը կարծուի. — Կրնայ ըլլալ որ այդ աստղերուն մէկ կողմը կը կողանք գոյացած է: Երբ թաւալանք ընթացքին այդ կողմը մեզի դառնայ, աստղը մեզի մոտ կ'երեւնայ: Երբեմն ալ երկու, երեք,

կա՛նգորս աստղեր միասին արեգակներու ընտանիք մը կը ձեռացնեն եւ կ'ապոյտ, կանաչ ու սպիտակ արեգակներ հրաշալի շրջապի մը կը միանան: Աստի անոնցմով լուսաւորուած մոլորակներուն վրայ ալ կապոյտ ու սպիտակ ցորեկներու կա: Նանց ու ծիրանեգոյնները կը յագորդեն: Անոնց գիշերներն ալ գոյնզգոյն արբանեակներով կը լուսաւորուին: Գեռ աւելին կայ. յաճախ արեգակներու շատ մը ընտանիքներ միացած աւելի մեծ խմբակայութիւն մը կը կազմեն եւ աստղագէտը մեծ սքանչւոյցով կը դիտէ որ արեւներու արդպիսի երկներանգ բոյլի մը մեծ ու հերմակ աստղ մը իբր առաջնորդ կը ծառայէ: Որո՞ւ ծանօթ են այն մեծ հրաշալիքները, զորս Աստուած դրած է այս աշխարհներուն մէջ:

Սակայն լուսոյ այս հիանալի գաւառներուն մէջն իսկ կը յայտնուի լրջութիւնը: Անոր, Որ մաշող կրակ է: Աստղագէտներ գտնէ 13 անգամ նշմարած են որ այդպիսի աստղեր յանկարծ բոցալուծուած են արտակարգ փայլով մը, յետոյ կամաց կամաց նուազած է իրենց լոյսը եւ վերջապէս բոլորովին անհետացած: Ի տես այդպիսի ահաւիշ դէպքի մը անհաւատ չկրնար անգգայ մնալ եւ չգործել «Մենք հոս անհուն հեռաւորութենէ մը ականատես եղանք թէ ինչպէս աշխարհ մը կրաւոր ոջնջացաւ»: Օր մըն ալ երկնային ուրիշ մարմնոյ մը բնակիչները պիտի տեսնեն թէ ինչպէս հեռակայ փոքր աստղ մը, մեր արեւը մեր երկրով միասին պիտի բոցալուծի եւ քիչ յետոյ գիշերուն մէջ ընկղմի (Բ. Պետր. Գ. 10):

Բայց աստղագէտները նշմարած են նաեւ թէ ինչպէս երկնակամարին մի քանի մոտ կէտերուն վրայ յանկարծ փայլիլ սկսան նոր լոյսեր, նոր աստղեր, հաւանաբար աստուածային նոր ստեղծագործութիւն:

Այսպէս մենք ալ արեւով ու լուսնով լուսաւորուած այս երկրին ոջնջացումէն յետոյ նոր երկրի մը կ'ապաստենք: «Մէյ մըն ալ ցորեկը քու լոյսը արեւը պիտի չ'ըլլայ, ու գիշերը լուսինը իր պայծառութիւնովը քեզի լոյս պիտի չտայ: Հապա եհովան քեզի յախտեալեան լոյս եւ քու Աստուածդ քու վառքը պիտի ըլլայ» (Ես. Կ. 19, Յայտ. ԻԱ. 23):

(Շար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՄՈՒՐԱՅԿԱՆԻՆ ՔԱՐՈՉԸ

Խեղճ ծերուկ մուրացկան մը, աղտոտ ցնցոտիներ հագած, ձմեռուան երեկոյ մը Նոր-Օրլէանզի (Բարիզ) փողոցներէն միոյն մէջ կեցած՝ մեծ ճաշարանի մը ապակեփեղկերէն ներս կը նայէր: Ներսէն հարուստ դասակարգի պատկանող երկու երիտասարդներ տեսան զայն: Անոնցմէ մին խնդալով ըսաւ.

— Այսօր բարի Սամարացիներ ըլլանք եւ սա խեղճին գաւաթ մը ըմպելիք հրամցնենք:

Ծերունին ներս կանչուեցաւ եւ մինչ նա զողողոյն ձեռքով մը իր գաւաթը կը լեցնէր՝ երիտասարդներէն մին ըսաւ անոր.

«Պապա» մեզի քարոզ մը տուր:

Ծերուկը իր ըմպելիքը մէկ ումպով պարպեց եւ շտկուելով անոնց առջեւ կայնեցաւ այնպիսի վեհ ու ցոյուն կեցուածքով մը, զոր իր ցնցոտիներն իսկ չէին կրնար կատարելապէս աւրել:

«Պարոններ» ըսաւ ան, «Այս երեկոյ, ձեզի նայելով եւ ինքզինքս ձեզի հետ բաղդատելով, ինծի կուգայ թէ իմ կորուսած տղամարդու թիւնս կը տեսնեմ ձեր մէջ»:

«Այս ապականած դէմքս ատեն մը գեղեցիկ եւ երիտասարդ էր ձեր ինն նման: Այս վատուած մարմինս ատեն մը ազնուական երեւոյթ ունէր ձեր ինն նման: Ես ունէի տուն մը, բարեկամներ, նախանձելի դիրք մը. ատենց ամէնը կուրսնցուցի: Ունէի կին մը արդիւղին երեւակայած գեղեցիկութեամբ: Ես անոր պատիւն ու արժանաւորութիւնը կործանեցի: Չաւակներ ունէի այնքան գեղեցիկ որքան դարնան ծաղիկները, անոնք գինեմոլ հօր մը անէծքներուն տակ թառամեցան եւ մեռան: Այսօր ես այր մըն եմ առանց կնոջ, հայր մը առանց գաւակներու, թշուառական մը առանց բնակարանի. մարդ մը, որուն մօտ ամէն գեղեցիկ զգացում մեռած է...: Այս բոլորը կլկեց ըմպելիքի գարշելի անդունդը»:

Ծերուկը լռեց: Ձեռքին բաժակը իր ուժասպառ մատերէն սահեցաւ եւ ջարդ ու փշուր եղաւ: Ճաշարանին դուռը բացուեցաւ ու դարձեալ զոյուեցաւ:

Ծերունին անյայտացած էր գիշերուան խոր լուռութեան մէջ:

Երիտասարդները իրարու երես նայեցան անշշուկ: Դեռ այնքան ազդու քարոզ մը լսած չէին ալքոհոլի աւերներու մասին: Անոնցմէ մին շուտ մը վճարեց իրենց պարտքը եւ բաժնուեցան աճապարանօք, այդ խօսքերէն երկու դասեր թարմ պահելով իրենց մտքին մէջ:

ա) Մի նայիր գինիին կարմրութեանը, գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն ու շիտակ վագելուն: Անիկա ետքը օձի պէս կը խաճնէ, ու քարբի պէս կը խայթէ. Առակ. ԻԳ. 31-32:

Ըմպելիքէ կենանք հեռի

Հեռու, հեռու, բաժակ...:

բ) Գինին մեղքին մէկ նշանակն է, ինչպէս գինիին, նոյնպէս նաեւ մեղքին պատճառած նիւթական եւ բարոյական աւերները ահարկու են: Միայն Աւետարանը կարող է անոնց զոհը ազատել ու վերականգնել:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Խմբագրութիւնս հրատարակաւ իր խնդակցութիւնը կը յայտնէ իր սիրելի թղթակից եւ պաշտօնակից Պատ. Զ. Բ. Պաւսագետնի, իր Նօթանի Առաջնորդական Դպրոցի երկու տարուան փայլուն ուսանողական շրջանէ մը յետոյ ընդունած վկայականին առթիւ: Կը մաղթենք ստաւածաշին սուտա օրհնութիւններ իր գործունէութեան մէջ. Ա. Կորնթ. Դ. 1:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ.— Մէկ երկու տեղերէ լսեցինք որ թերթիս Յունիս ամսուան 7րդ թիւին Ստաուի յօդուածը կարգ մը թիւրիմացութեանց տեղի առած է ումանց: Նախ, մեր ցաւը կը յայտնենք այս մասին, վասն զի երբեք նպատակ չունինք մէկը գայթակղեցնել կամ սխալ գաղափարներ կ'ընել մէկու մը թերթի մ'ընդունաւ: Մեր նպատակը ամենուին յայտնի է, հագեւոր է, դրական է:

Գալով Ստաուի յօդուածին, անիկա յօդուածաշարի մը միայն մէկ կտորն էլ լաւաւ թերեւս թիւրիմացութիւն մը արթնցնէ, որպէս թէ Ստաու երկիրքի կամ դժոխքի չհաւատար: Ստաույն մեր հանգուցեալ եղբայրը, երբ աշխարհի վրայ կը գտնուէր, մանուկանք Եւրոպայի մէջ, իր քաղաքները հետզհետէ գալիք բաներու մասին դատաստանի եւ արդարութեան բնոյթն ունէին: Ստաու կը հաւատար դժոխքի ու երկիրքի ու, ուր հիմա կը հաւատանք թէ կը գտնուի կատարեալ երջանկութեան մէջ: Այս յօդուածը անոնց գէմ գլուած է, որոնք կը պնդեն թէ Ստաուած այն տղերքն է, ուրկէ կը բղիւնի բարին ու չարը: Առաջին բարի է եւ Անոր մէջ չարը գոյութիւն չունի: Յօդուածին միւրէն ի վար ամբողջ ուղղութիւնն է ցոյց տալ Ստաուի չեղաւ եւ կամ առանց Անոր եղաւ մարդոց վիճակը: Առանց Ստաուի եղաւ մարդու մը միակ դատապարտութեան պատասխանատունն ունի ինքն է, ո'չ թէ պարագաներ կամ աստուածային քամահածոյք մը:

Առաւած արդար է, երբ Անիկա մարդոց գործերուն համաձայն հատուցում կ'ընէ անոնց. (Բ. Կորնթ. Ե. 10):

ԻՐԵՉ Կ'ԸՍԵ ՆՈՐ ԱՆԵՏԱԲԵՐ.— Ճարապետի Հայ Աւետ. եկեղեցիին վարչական փողովէն (փողովականներու ստորագրութեամբ) ստացանք գրութիւն մը իրր հերքմանակի բնաւաջի Ապրիլ 19, 2. տարի, Թիւ. 242 ին մէջ տեսնուած Թղթակցութեանց, որ կը նկարագրէր Հայ Բող. մը զարշակի մէկ արարքը եւ ուրիշ ցաւերը: Պէտք է ըսել Թէ յիշեալ Թղթակցութիւնը ծայրէ ծայր ստարամուծիւններէ կը բաղկանայ եւ արմէք ունի միայն ցուցնելու համար Թղթակցութիւնը խմբագրողին եւ զայն հիւրընկալող Թերթին մակարդակը: Մեզի համար շատ մեծ ցաւ մըն է հոյ մամուլը այսչափ ինկած տեսնել...»:

Դ. Խ.— Մենք ուրիշ առթիւ տնձումք Եթաւաջի յարգելի խմբագիր Շ. Ի ըսինք թէ Ձեր թղթակցներուն բոլորովին մի' հաւատար, վասն զի անոնք յաճախ անձնական դրդապատճառներով գրիչ կը շարժեն: Այս գրութիւնը անգամ մըն ալ կուգայ հատաւոր մեր գաղափարը եւ մենք հեղ մըն ալ հրատարակաւ կը խնդրենք յարգելի Տիար Շ. Ի նկատել չկախել իր թղթակցներուն ամէն գրութեանց եւ կամ անաչառ եւ հաւատարմի թղթակցներ փնտռել, ինչ որ թերթի մը յաջողութեան ու վարկին միակ պայմանն է:

Յ. Ն. Ղ.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպագր. «ԲԱՆԲԵՐ»-ի, 7, Բիւ Բարեր